ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/273

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2020թ. թիվ 26/26-1/19491-2020 գրությամբ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Մելիորացիա» ՓԲԸ-ի 22.12.2020թ. թիվ 265-ԱՄ գրության հիման վրա 24.12.2020թ. թիվ 26/26-1/19491-2020 գրությամբ նախաձեռնել է «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/273 ընթացակարգի շրջանակներում 12.01.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Մելիորացիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Մելիորացիա» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.12.2020թ. թիվ 265-ԱՄ գրությամբ հայտնել է հետևյալը.

««Մելիորացիա» ՓԲԸ-ի և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 05.08.2020թ. կնքված թիվ ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԱՇՁԲ-20/1-1 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն ստանձնել է «Մելիորացիա» ՓԲԸ-ի վարչական շենքի 1-ին հարկի լաբորատոր սենյակների վերանորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ որը համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելվածով սահմանված օրացուցային գրաֆիկի պահանջների պետք է ավարտվեր 30.08.2020թ.:

Հաշվի առնելով ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության հանգամանքը և այդ կապակցությամբ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ ներկայացրած առաջարկությունը՝ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող 30.08.2020թ. կնքված թիվ 1 համաձայնագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 30.09.2020թ. «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից սահմանված նոր վերջնաժամկետը խախտելու հետևանքով, «Մելիորացիա» ՓԲԸ-ն հաշվի առնելով ՀՀ-ում սահմանված ռազմական դրությունը՝ համաձայն Պայմանագրի 3.1.2 կետի սահմանել է աշխատանքի կատարման նոր ողջամիտ ժամկետ՝ մինչև 15.12.2020թ., սակայն նշված ժամկետի ավարտին աշխատանքները կրկին չեն իրականացվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1 և 3.2 կետերով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները՝ «Մելիորացիա» ՓԲԸ-ն, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն

որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/273 ընթացակարգի շրջանակներում 12.01.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/273 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/273 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Մելիորացիա» ՓԲԸ-ի և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 05.08.2020թ. կնքվել է թիվ «ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԱՇՁԲ-20/1-1» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն՝ տվյալ դեպքում «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն, պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Մելիորացիա» ՓԲԸ վարչական շենքի 1-ին հարկի լաբորատոր սենյակների վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. Պայմանագրի 1.2 ենթակետի համաձայն՝ նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

3. Պայմանագրի 1.3 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.08.2020թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

4. Պայմանագրին կից N 2 Հավելվածի՝ «Մելիորացիա» ՓԲԸ-ի վարչական շենքի 1-ին հարկի լաբորատոր սենյակների վերանորոգման աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքները պետք սկսվեն Պայմանագիրը ուժի մեջ մտնելու հաջորդ օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.08.2020թ.:

5. Թիվ «ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԱՇՁԲ-20/1-1» պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 30.08.2020թ. կնքվել է պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ 1 համաձայնագիրը, որի համաձայն՝ պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 30.09.2020թ.:

6. «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 26.11.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի և «Մելիորացիա» ՓԲԸ-ի միջև թիվ «ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԱՇՁԲ-20/1-1» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի շրջանակներում «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն պարտավորված էր իրականացնել «Մելիորացիա» ՓԲԸ վարչական շենքի 1-ին հարկի լաբորատոր սենյակների վերանորոգման աշխատանքներ:

Աշխատանքների իրականացումը հետաձգվեց ՀՀ տարածքում ռազմական և արտակարգ դրության հայտարարման պատճառով: Սակայն, իրավիճակի կայունացման հետ կապված, տեղեկացնում եմ Ձեզ, որ ընկերությունը մոտակա ժամանակ կվերսկսի աշխատանքները և պատրաստվում է ավարտել այն մինչև 2020թ. դեկտեմբերի 15-ը»:

7. Պատվիրատուն «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին ուղղված 09.12.2020թ. թիվ 253-ԱՄ գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից «Մելիորացիա» ՓԲԸ-ին ուղղված գրությամբ հավաստվել էր, որ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը կավարտվի թիվ «ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԱՇՁԲ-20/1-1» պայմանագրով ստանձնած աշխատանքները, սակայն մինչ օրս աշխատանքները չեն վերսկսվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք, որ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը լաբորատոր սենյակների վերանորոգման աշխատանքները չավարտելու և աշխատանքի արդյունքը ամբողջությամբ «Մելիորացիա» ՓԲԸ-ին չհանձնելու դեպքում, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետը՝ հայտնում ենք Ձեզ, որ աշխատանքերի կատարման վերջնաժամկետի խախտման դեպքում «Մելիորացիա» ՓԲԸ-ն միակողմանի ամբողջությամբ կլուծի Պայմանագիրը: Պայմանագրի 6.3 կետի

պահանջների համաձայն Պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 16-րդ ենթակետի և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից որպես պայմանագրի և որակավորման ապահովումներ ս.թ. օգոստոսի 5-ին ներկայացրած տուժանքի համաձայնագրերի՝ «Մելիորացիա» ՓԲԸ-ն պետք է դիմի «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին սպասարկող «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին՝ վերը նշված տուժանքների մասին համաձայնագրերում նշված գումարները գանձելու նպատակով...»:

12. Պատվիրատուն «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին ուղղված 17.12.2020թ. թիվ 260-ԱՄ ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««Մելիորացիա» ՓԲԸ-ի և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 05.08.2020թ. կնքված «ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԱՇՁԲ-20/1-1» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն ստանձնել էր «Մելիորացիա» ՓԲԸ-ի վարչական շենքի 1-ին հարկի լաբորատոր սենյակների վերանորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ որը համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելվածով սահմանված օրացուցային գրաֆիկի պահանջների պետք է ավարտվեր 30.08.2020թ.:

Հաշվի առնելով ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության հանգամանքը և այդ կապակցությամբ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ ներկայացրած առաջարկությունը՝ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող 30.08.2020թ. կնքված թիվ 1 համաձայնագրով աշխատանքների վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 30.09.2020թ.: «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից սահմանված նոր վերջնաժամկետը խախտելու հետևանքով, «Մելիորացիա» ՓԲԸ-ն հաշվի առնելով ՀՀ-ում սահմանված ռազմական դրությունը՝ համաձայն Պայմանագրի 3.1.2 կետի սահմանվել է աշխատանքի կատարման նոր ողջամիտ ժամկետ՝ մինչև 15.12.2020թ. սակայն նշված ժամկետի ավարտին աշխատանքները կրկին չեն իրականացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1 և 3.2 կետերով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները՝ «Մելիորացիա» ՓԲԸ-ն, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պաշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականին մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

13. Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 17.12.2020թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.12.2020թ. թիվ 26/26-1/19491-2020 գրությունը, «Մելիորացիա» ՓԲԸ-ի 22.12.2020թ. թիվ 265-ԱՄ գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի

(պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Մելիորացիա» ՓԲԸ-ի և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 05.08.2020թ. կնքվել է թիվ «ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԱՇՁԲ-20/1-1» ծածկագրով կապալային աշխատանքների

կատարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն՝ տվյալ դեպքում «ԳՈԵԳԳՈԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն, պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Մելիորացիա» ՓԲԸ վարչական շենքի 1-ին հարկի լաբորատոր սենյակների վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 ենթակետի համաձայն՝ նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 1.3 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.08.2020թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի 3.4-րդ կետի 3.4.1-րդ ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավոր է աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

Պայմանագրի 5-րդ կետի 5.1-րդ ենթակետով սահմանվում է, որ Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 4 380 000 (չորս միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որից 730 000.0 (յոթ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Պայմանագրին կից N 1 Հավելվածով՝ ծավալաթերթ-նախահաշվով, սահմանվել է «Մելիորացիա» ՓԲԸ-ի վարչական շենքի 1-ին հարկի լաբորատոր սենյակների վերանորոգման աշխատանքների կատարումը:

Պայմանագրին կից N 2 Հավելվածի՝ «Մելիորացիա» ՓԲԸ-ի վարչական շենքի 1-ին հարկի լաբորատոր սենյակների վերանորոգման աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքները պետք սկսվեն Պայմանագիրը ուժի մեջ մտնելու հաջորդ օրվանից և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.08.2020թ.:

Թիվ «ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԱՇՁԲ-20/1-1» պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 30.08.2020թ. կնքվել է պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ 1 համաձայնագիրը, որի համաձայն՝ պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 30.09.2020թ.:

«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 26.11.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի և «Մելիորացիա» ՓԲԸ-ի միջև թիվ «ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԱՇՁԲ-20/1-1» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի շրջանակներում «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն պարտավորված էր իրականացնել «Մելիորացիա» ՓԲԸ վարչական շենքի 1-ին հարկի լաբորատոր սենյակների վերանորոգման աշխատանքներ:

Աշխատանքների իրականացումը հետաձգվեց ՀՀ տարածքում ռազմական և արտակարգ դրության հայտարարման պատճառով: Սակայն, իրավիճակի կայունացման հետ կապված, տեղեկացնում եմ Ձեզ, որ ընկերությունը մոտակա ժամանակ կվերսկսի աշխատանքները և պատրաստվում է ավարտել այն մինչև 2020թ. դեկտեմբերի 15-ը»:

Պատվիրատուն «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին ուղղված 09.12.2020թ. թիվ 253-ԱՄ գրությամբ, հայտնել է հետևյալը.

««ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից «Մելիորացիա» ՓԲԸ-ին ուղղված գրությամբ հավաստվել էր, որ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը կավարտվի թիվ «ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԱՇՁԲ-20/1-1» պայմանագրով ստանձնած աշխատանքները, սակայն մինչ օրս աշխատանքները չեն վերսկսվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք, որ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը լաբորատոր սենյակների վերանորոգման աշխատանքները չավարտելու և աշխատանքի արդյունքը ամբողջությամբ «Մելիորացիա» ՓԲԸ-ին չհանձնելու դեպքում, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետը՝ հայտնում ենք Ձեզ, որ աշխատանքերի կատարման վերջնաժամկետի խախտման դեպքում «Մելիորացիա» ՓԲԸ-ն միակողմանի ամբողջությամբ կլուծի Պայմանագիրը: Պայմանագրի 6.3 կետի պահանջների համաձայն Պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 16-րդ ենթակետի և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից որպես պայմանագրի և

որակավորման ապահովումներ ս.թ. օգոստոսի 5-ին ներկայացրած տուժանքի համաձայնագրերի՝ «Մելիորացիա» ՓԲԸ-ն պետք է դիմի «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին սպասարկող «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին՝ վերը նշված տուժանքների մասին համաձայնագրերում նշված գումարները գանձելու նպատակով...»:

Պատվիրատուն «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին ուղղված 17.12.2020թ. թիվ 260-ԱՄ ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««Մելիորացիա» ՓԲԸ-ի և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 05.08.2020թ. կնքված «ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԱՇՁԲ-20/1-1» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն ստանձնել էր «Մելիորացիա» ՓԲԸ-ի վարչական շենքի 1-ին հարկի լաբորատոր սենյակների վերանորոգման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ որը համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելվածով սահմանված օրացուցային գրաֆիկի պահանջների պետք է ավարտվեր 30.08.2020թ.:

Հաշվի առնելով ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության հանգամանքը և այդ կապակցությամբ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ ներկայացրած առաջարկությունը՝ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող 30.08.2020թ. կնքված թիվ 1 համաձայնագրով աշխատանքների վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 30.09.2020թ.: «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից սահմանված նոր վերջնաժամկետը խախտելու հետևանքով, «Մելիորացիա» ՓԲԸ-ն հաշվի առնելով ՀՀ-ում սահմանված ռազմական դրությունը՝ համաձայն Պայմանագրի 3.1.2 կետի սահմանվել է աշխատանքի կատարման նոր ողջամիտ ժամկետ՝ մինչև 15.12.2020թ. սակայն նշված ժամկետի ավարտին աշխատանքները կրկին չեն իրականացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1 և 3.2 կետերով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները՝ «Մելիորացիա» ՓԲԸ-ն, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պաշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականին մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 17.12.2020թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ ամփոփելով գործով առկա վերոգրյալ փաստերը, համադրելով կիրառման ենթակա իրավական նորմերի հետ՝ արձանագրում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 3-րդ կետի 3.1.4-րդ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) ***<u>Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),</u>***

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

Պայմանագրի 1.3 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ***30.08.2020թ.***:

Թիվ «ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԱՇՁԲ-20/1-1» պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 30.08.2020թ. կնքվել է պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ 1 համաձայնագիրը, որի համաձայն՝ պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև ***30.09.2020թ***.:

Այսպիսով՝ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն իր և «Մելիորացիա» ՓԲԸ-ի միջև 05.08.2020թ. կնքված կապալային աշխատանքների կատարման պայմանագրի շրջանակներում ***խախտել է պայմանագրի 1.3 կետով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),*** ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2020թ. թիվ 26/26-1/19491-2020 գրությամբ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին ընդգրկել

գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**